ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՐՑԱԽՈՒՄ IX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ. ՀԱՅԵՐԻ ԴԻՄԱԴՐԱԿԱՆ ԿՌԻՎՆԵՐԸ

ՀԵՆՐԻԿ ՍՎԱՋՅԱՆ

VIII դարի հիսունական թվականներին Արաբական խալիֆայությունում տեղի է ունենում դինաստիական փոփոխություն. կառավարող Օմայան հարստությանը փոխարինում է Աբասյանների տունը: Դա լուրջ հետևանքներ է թողնում ոչ միայն բուն խալիֆայությունում, այլև նրան ենթակա երկրներում, առանձնապես Մեծ Հայքում: Այստեղ խիստ բարձրանում են հարկերի չափերը, ծխահարկը փոխարինվում է գլխահարկով: Հարկատու են դառնում հասարակության բոլոր խավերը, նույնիսկ հոգևորականները, որոնք մինչ այդ ազատված էին հարկատվությունից: Հարկ է սահմանվում մինչև իսկ մեռածների համար: Ավելի բարվոք վիճակում չէին գտնվում նաև արդեն հարկ վճարողները. դեռ չվճարողներից տարբերելու համար նրանց վզից կապարե կնիքներ էին կախում: Ընդսմին, հարկահավաքությունն ընթանում էր ամենաանողորմ ձևերով: Հայ պատմիչ Ղևոնդը (VIII դ.) գրում է, որ խալիֆայության Հյուսիսային[1] փոխարքա Աբու Ջաֆար ալ-Մանսուրը (ապագա խալիֆը՝ 750-754) իր փոխարքայության սահմաններում դուրս գալով շրջագայության՝ «նախ ելեալ յաշխարհս Հայոց՝ բազում վշտօք և նեղութեամբ վտանգէր զամենեսին և հասուցանէր ի չքաւորութիւն տնանկութեան, մինչև պահանջել հարկս և ի մեռելոցն: Եւ զամենայն բազմութիւն որբոց և այրեաց չարալլուկ տառապեցուցանէր. վտանգէր զքահանայս և զպաշտօնեայս աստուածային խորանին խոշտանգանօք և քրօք այպանութեան և գանիւք՝ ի յայտ ածել զանուանս վախճանելոցն և զընտանիս նոցուն: Խոշտանգէր և զբնակիչս աշխարհիս բռնագոյն և դառն հարկապահանջութեամբ, առնուլ ըստ գլխոյ բազում զուզէս արծաթոյ, և դնել կնիք կապարեայ յամենեցուն պարանոցս»[2]:

Արաբական տիրապետության խստացումը, հարկերի անօրինակ բարձրացումն ու գանձման անագորույն ձևերը, տեղական հայ իշխանների իրավունքների սահմանափակումն ու այլ անօրինականություններ անտանելի ծանր դրութ-

---

[1] *Արաբներն իրենց ընդարձակածավալ տերությունը բաժանել էին հինգ փոխարքայությունների, որոնցից մեկն էր Հյուսիսայինը: Սա ներառում էր նվաճած Մեծ Հայքը, Վիրքը, Աղվանքը, Ատրպատականը, Վերին Միջագետքը (Ջալիլան), Փոքր Ասիայի սահմանամերձ շրջանները (տե՛ս Ա. Տեր-Ղևոնդյան. Արաբական խալիֆայության Հյուսիսային փոխարքայությունը.– Հոդվածների ժողովածու, Երևան, 2003, էջ 165): Վարչական այս միավորը արաբները կոչում էին «Արմինիա»:*

[2] *Պատմութիւն Ղեւոնդեայ Մեծի վարդապետի հայոց, Սանկտ Պետերբուրգ, 1887, էջ 127:*

յուն էին ստեղծում Հայաստանում[3] և հայ ժողովրդին հաճախ պայքարի հանում արաբական լծի դեմ: VIII դարի վերջին քառորդն ամբողջովին անցնում է հակաարաբական պայքարի բովում[4]:

Ծանր ու դառնաշունչ օրեր եկան և Հայոց երկրի Հյուսիսարևելյան կողմանց կամ Ուտիքի ու Արցախի համար: Այստեղ՝ նրանց մայրաքաղաք Պարտավում, որը 789 թ. Դվինի հետ դարձել էր «Արմինիա» վարչական միավորի կենտրոնը, հաստատվում են արաբ կառավարիչներ կամ, ինչպես նրանց հայ պատմիչներն էին անվանում, ոստիկաններ: Մովսես Կաղանկատվացին գրում է. «Եւ եղն այս տանս Աղուանից (իմա՛ Հայոց Արևելից կողմանց – Հ. Ս.) զրկանք մեծապէս, զի զմայրաքաղաքն Պարտաւ խլեցին յիշխանացն Աղուանից տաճիկք ըստ իւրեանց անառակ ազգաշաղախութեանն: Եւ որպէս զառաջինն աթոռ իշխանութեանն իւրեանց արկին ի Դամասկոս Ասորեստանեայց, նոյնպէս աստ յԱղուանս նստուցին ի Պարտաւ կալ արքունեացն՝ և ծծել զպարարտութիւն երկրիս»[5]: Հաստատվելով Պարտավում՝ արաբները սկսեցին ավելի հաճախակի հարձակումներ գործել շրջակա բնակչության վրա, կողոպտել ու գերեվարություններ կատարել: Դրությունն այստեղ վատթարանում էր նաև նրանով, որ տեղի հայ բնակչությունը արաբ ոստիկանների ոտնձգություններին դիմագրավելու հետ մեկտեղ հարկադրված էր դիմադրական կռիվների դուրս գալ նմանապես հյուսիսային զանազան ցեղերի ու որոշ բախտախնդիրների դեմ: Եվ նրանք սեփական իշխանների գլխավորությամբ մեկ անգամ չէ, որ, կռվի դուրս գալով արաբների ու այլազգի ուրիշ ասպատակիչների դեմ, հաղթում են նրանց և ջարդելով դուրս վանում իրենց երկրի սահմաններից:

821 թ. Աղվանքի իշխան Վարազ Տրդատ Գ-ի եղեռնական սպանությունից հետո հերթական անգամ Արցախում խախտվում է քաղաքական անդորրը: Օգտվելով ստեղծված իրավիճակից՝ նույն թվականին արաբական մի ընտիր զորագունդ[6] գաղտագողի դուրս գալով Պարտավից մտնում է Ամարաս կամ Մյուս Հաբանդ գավառ, ասպատակության ենթարկում այն և շուրջ հազար հոգու գերի վերցնելով՝ ամրանում Մեծ Առանք (Մեծ Իրանք-Խաչեն) գավառի Շիկաքար[7] կոչվող վայրում: Դա լսելով՝ այդ տիրույթների տեր Առանշահիկ իշխան, Սմբատի որդի Սահլ Սմբատյանը իր և եղբայրների միացյալ զորքերի գլուխ անցած

---

[3] *Արաբների վարած տնտեսական ու սոցիալական քաղաքականության մասին մանրամասն տե՛ս* А. Т е р - Г е в о н д я н. Армения и арабский халифат. Ереван, 1977, с. 176–210.

[4] *Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն. Ժողովրդական ապստամբությունները Հայաստանում արաբական տիրապետության դեմ.– Երկեր, հ. Բ, Երևան, 1978, էջ 542-570:*

[5] *Մ ո վ ս է ս Կ ա ղ ա ն կ ա տ ո ւ ա ց ի. Պատմութիւն Աղուանից աշխարհի (այսուհետև՝ Կ ա ղ ա ն կ ա տ վ ա ց ի), քննական բնագիրը և ներածությունը՝ Վարագ Առաքելյանի, Երևան, 1983, էջ 325:*

[6] *Հ. Քյուրտյանը գտնում է, որ սա արաբական կանոնավոր բանակի զորագունդ չէր, այլ Բաբեկի աղանդի հետևորդ աղանդավորներ էին (տե՛ս Հ. Ք յ ո ւ ր տ յ ա ն. Բաբակ և Սահլ իպն Սնբատ (էջ մը մեր իններորդ դարու պատմութենեն).– «Բազմավեպ», 1958, թիվ 3-5, էջ 72):*

[7] *Ստեփանակերտի շրջանում՝ Քարագլուխ գյուղն իր շրջակայքով (տե՛ս. Մ. Բ ա ր խ ո ւ տ ա ր յ ա ն ց. Արցախ, Բագու, 1895, էջ 167: Նաև՝ Ս. Ս ա ր գ ս յ ա ն. Արցախ, պատմաաշխարհագրական ճշգրտումներ, Երևան, 1996, էջ 68): Ըստ Հ. Քյուրտյանի՝ այստեղ էին պաշարված նաև Սահլի կինը, երեխաները և կնոջ վանական եղբայրը (տե՛ս Հ. Ք յ ո ւ ր տ յ ա ն. նշվ. աշխ., էջ 76):*

հարձակվում է նրանց վրա և մի մասին կոտորելով, իսկ մյուսներին փախուստի մատնելով՝ ազատում է գերիներին ու վերադարձնում ավարը: «Իսկ ի լնուլ ՄՀ. թուոյ հայոց (821 թ. – Հ. U.) ելին գաղտաբար ի Պարտաւայ արք ընտիրք ի Տաճկաց և յաւարի առին զԱմարաս գաւառ և գերի առեալ իբրև ոգիս հազարա և ի Մեծիրանց սահմանի ամրացեալք՝ ի տեղւոջն, որ կոչի Շիկաքար: Յայնժամ արի ու շքեղատեսակն Սահլի Սմբատեան Եռանշահիկն տէր՝ քաջազօր եղբարքք իրովք և զօրօքն իւրեանց ի լուսանալ առաւօտուն ի վերայ յարձակեալ առ հասարակ դիաթաւալ զնոսա ցիր և ցան կացուցանէին, և որպէս յառիւծոյ ժանեաց զգերեալսն ի բաց կորզէին»[8],– գրում է Կաղանկատվացին: Այս հարվածից հետո արաբները երկար ժամանակ հանգիստ են թողնում մերձակա շրջանների բնակիչներին: Այսուհանդերձ արաբական վտանգը մնում էր, բայց և դրա առաջ չէին ընկրկել նաև արցախահայերը: Վերը նկարագրված դեպքերից մոտ մեկ ու կես տասնամյակ անց՝ 837 թ. արաբական մի այլ՝ տասներկու հազարանոց հեծելազունդ Բաղդադից հանկարծակի հայտնվելով, ներխուժում է Արցախ՝ կողոպուտ փնտրելով այստեղ: Սակայն, մինչ արաբները կհասցնեին ասպատակել երկիրը, Կաղանկատվացու վկայությամբ, արցախահայերը նույն Առանշահիկ իշխանի գլխավորությամբ հուժկու հարվածներով դարձյալ կոտորում են նրանց ու դուրս վռնդում: Պատմիչի պատկերավոր նկարագրությամբ, կռվի բռնվելով նրանց հետ Սահլ Սմբատյանը «որպէս արծուի խոյացեալ ի տկար թռչունս՝ այսր անդր ցրուեալ տապաստ դաշտացն արկեալ վանէր»[9], մեկ անգամ ևս երկիրն ազատելով նոր ավերածություններից ու գերեվարություններից: Արցախցիները արաբներին հաջողությամբ դիմագրավելու հետ մեկտեղ, հաճախակի ըմբոստանալով, իրենք էին նախահարձակ լինում:

835 թ. արաբական խալիֆայության Հյուսիսային փոխարքա էր նշանակվել Ալ Աֆշին Հայդար իբն Քաուսը (835–840 թթ.), որը, անցնելով իր պարտականությունների կատարմանը, էլ ավելի է բարձրացնում հարկերը, խորացնելով առանց այդ էլ դրանց ծանրությունից նեղվող հայերի դժգոհությունը: Շուտով Հայաստան որպես կառավարիչ է ուղարկվում Մուհամեդ իբն Սուլայման Սամարքանդցին (835–839 թթ.): Վերջինս 837 թ. իր քարտուղարի հետ մեկնում է Արցախ՝ հարկերը հավաքելու: Նրա գործողություններից ու ծանր հարկերից դժգոհ հայերը Սահլ Սմբատյանի առաջնորդությամբ, ըմբոստանում են նրա դեմ, սպանում են քարտուղարին, իսկ իրեն էլ փախուստի մատնում[10]: Այս հանդուգն արարքը, սակայն, մնում է անպատիժ: Հավանաբար, մի կողմից ցանկանալով մեղմել իրենց հարկային ծանր քաղաքականության հետևանքով առաջացած լարվածությունը, մյուս կողմից էլ տարված լինելով ներքին խնդիրներով ու, մանավանդ, նույն թվականին Արցախում հայտնված խուրամյան շարժման աղանդապետ Բաբեկին հայ իշխանների օգնությամբ ձերբակալելու հեռանկարով,

---

[8] *Կ ա ղ ա ն կ ա տ վ ա ց ի, էջ 326:*

[9] *Նույն տեղում, էջ 330*

[10] Б а л а д з о р и. Книга завоевания стран, пер. П. К. Жузе. Баку, 1927, с. 21; *Յ ա ք ռ ւ բ ի.– Արաբացի մատենագրեր Հայաստանի մասին, հավաքեց և թարգմանեց Բագրատ Խալաթյանց, Վիեննա, 1919, էջ 120:*

արաբները հանդուրժողական վերաբերմունք են դրսևորում ապստամբների նկատմամբ:

IX դարի սկզբներին Ատրպատականում ծագել էր մի շարժում, որն իր պայքարի գաղափարական զենքն էր դարձրել խուրամյան[11] կոչվող աղանդավորականների վարդապետությունը: Ըստ Միքայել Ասորի պատմիչի՝ սրանց աղանդի հիմքում ընկած էր հավատը Մահադի անունով ոմն մարգարեի նկատմամբ, որին անմահության հատկանիշ վերագրելով, նրա հետևորդները հույս էին տածում, թե նա պիտի գա և արդարություն տարածի երկրի վրա[12]: Շուտով սրանց շարքերում հայտնվում է մեկը, որն իրեն անվանում է Մահադի և ներկայանում որպես նրանց սպասած մարգարեն[13]: Սա հայկական ու արաբական աղբյուրներից հայտնի Բաբեկն էր (Բաբակը, Բաբանը, Բաբը): Չարաշահելով աղանդավորականների կրոնական զգացմունքները ու ելնելով հիշյալ աղանդի էությունից՝ այս արկածախնդիր ավազակը իրեն անմահ է հռչակում: «Ասէր զինքն անմահ»,- գրում է Վարդան Արևելցին[14]: Խաբեությամբ շահելով աղանդավորականների վստահությունն ու անցնելով շարժման գլուխ՝ նախկին ջորեպանը, Միքայել Ասորու վկայությամբ, «Երթայր յամենայն կողմանս և զամենայն ազգ միապես կոտորէր… եւ հարկանէր և աւերէր առհասարակ»[15]: Ասպատակություններ սփռելով շուրջ բոլորը՝ նա արդեն 821 թ. իր զորախմբերով հայտնվում է Հայոց Արևելից կողմերում: Այդ տարի Հայաստան է արշավում Սնադա անունով մի արաբ զորավար (ըստ Ստ. Օրբելյանի՝ Մրվանը, որ հայտնի էր նաև Ավառանշան անունով). ասպատակում է երկիրը, ավերի ու ավարի ենթարկում նաև Սահլի տիրույթները ու անցնում Սյունիք՝ ամրանալով Ծղուկ գավառի Շաղատ ավանի բերդատեղիում[16]: Սյունաց Վասակ իշխանը կանչում է այս Բաբեկին և նրա օգնությամբ դուրս վանում Սնադային իր երկրի սահմաններից: Այսպես հայտնվելով Հայոց Արևելից կողմերում՝ Բաբեկը այնուհետև այդ կողմերի համար դառնում է մի կատարյալ պատուհաս: Սնադային դուրս վռնդելուց հետո Սյունյաց իշխանը վախճանվում է: Բաբեկը, օգտագործելով նրա մահը, փորձում է տիրանալ Սյունյաց աշխարհին և այդ նպատակով նույնիսկ ամուսնանում է վախճանված իշխանի դստեր հետ[17]: Բաբեկի այս նկրտումները, սակայն, դեմ են առնում հպարտ ու քաջարի սյունեցիների դիմադրությանը, որին նա պատասխանում է կոտորելով Բաղք (826 թ.) և Գեղարքունիք (827 թ.) գավառների բնակչությանը, հրկիզում Մայրավանքը՝ մաքենացիների վանական ծաղկուն համալիրը (ըստ

---

[11] *Շարժումն իր այդ անվանումը՝ խուրամյան, ստացել է Արդաբիլի մարզի Խուրամ կոչվող վայրից, որտեղ այն սկզբնավորվել է: Շարժումը տևել է 20 տարի՝ 817-837 թթ.:*

[12] *Ժամանակագրութիւն Տեառն Միխայէլի Ասորւոց պատրիարքի, յԵրուսաղէմ, 1871, էջ 364 (այսուհետև՝ Մ ի ք ա յ է լ Ա ս ո ր ի):*

[13] *Նույն տեղում:*

[14] *Մեծին Վարդանայ Բարձրբերդեցւոյ Պատմութիւն տիեզերական, Մոսկվա, 1861 էջ 109 (այսուհետև՝ Վ ա ր դ ա ն Ա ր և ե լ ց ի):*

[15] *Մ ի ք ա յ է լ Ա ս ո ր ի, էջ 364:*

[16] *Կ ա ղ ա ն կ ա տ վ ա ց ի, էջ 326: Նաև՝ Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ Ստեփանոսի Օրբէլեան եպիսկոպոսի Սիւնեաց (այսուհետև՝ Օ ր բ ե լ յ ա ն), Թիֆլիս, 1910, էջ 158:*

[17] *Կ ա ղ ա ն կ ա տ վ ա ց ի, էջ 326, Օ ր բ ե լ յ ա ն, էջ 158:*

Կաղանկատվացու՝ մայրաքաղաքը): Հայաստանում գործած նրա այդ վայրագությունների մասին Կաղանկատվացին գրում է. «Անհրամանակատար եղև գաւառն Բաղաց՝ յանօրէն Բաբանայ. և էլ նա ի Պարսից և էառ աւերեաց զերկիրն և ի սուր սուսերի էարկ զկանայս և զմանկունս Բաղաց: Եւ անտի ի միւս տարին էանց Բաբան ի գաւառն Գեղարքունի և էարկ ի սուսերի զբնակիչսն ոգիս իբրև ԺԵ. հազարս, և զմեծ մայրաքաղաքն Մաքենացւոց այրեաց, մնաց միայն ջրաղացն և այլ ոչ ինչ և էր թիւն Հայոց ՄՀԶ. (827 – Հ. Ս.)»[18]: Ստ. Օրբելյանի վկայությամբ, Բաբեկին օժանդակում էր Արցախի իշխան Աբլ Ասադը[19]: Նրանց այդպիսի համագործակցության մասին խոսում է և Կաղանկատվացին: Ըստ վերջինիս՝ Ստեփանոս Աբլ Ասադը սպանվում է, որովհետև «էածն զԲաբան և եհար զԲաղականեցիսն»[20]: Բաբեկի այստեղ հայտնվելուց հետո, Հայոց Արևելից կողմանք ավելի քան մեկ ու կես տասնամյակ շարունակ ենթարկվում են նրա անասելի դաժան ասպատակություններին, ավերին ու թալանին: Ահավոր դաժանությամբ էր նա վարվում բոլոր նրանց հետ, ովքեր փորձում էին փոքր-ինչ անհնազանդություն ցուցաբերել: Առաձնապես ծանր էր հայ իշխանների ու ազնվականների դրությունը: Բացի ամեն ինչից նրանք ենթարկվում էին ինքնասիրությունը վիրավորող բարոյական ամենանվաստացուցիչ հարվածների: Արաբ պատմիչների վկայությամբ՝ Բաբեկը հենց իմանում էր, որ նրանցից մեկը գեղեցիկ կին ունի, քույր կամ դուստր, պահանջում էր բերել իր մոտ: Համաձայնության դեպքում գործն ավարտվում էր դրանով, հակառակ պարագայում, նա ինքն էր իր զորքերով գնում այնտեղ, ավերում անհնազանդ իշխանի կալվածքը, կողոպտում ունեցվածքը, ապա խլելով իր տարփանքի գերուհուն, վերադառնում[21]: Պատահական չէ, որ նա պատմիչների կողմից որակվել է որպես «անօրէն», «մարդախողխող, աշխարհավեր, արիւնարբու գազան» մակդիրներով[22]:

Հայ ժողովրդի հյուսիսարևելյան այս հատվածը համառ ու հերոսական դիմադրություն էր ցույց տալիս Բաբեկին և հաճախ հաղթանակում: Այսպես. վերը նկարագրված դեպքերից երեք տարի անց՝ 830 թ., Բաբեկը հարձակվում է Ամարաս գավառի վրա և փորձում այն ենթարկել իրեն: Սակայն ոչ ռազմական գործողությունները և ոչ էլ խաղաղությամբ իրեն հնազանդվելու կոչերը չեն կարողանում կոտրել խիզախ ամարասցիների ազատասեր կամքը: Ամրանալով բերդում՝ նրանք դիմադրում են չարին: Ի զորու չլինելով հասնել իր նպատակին, Բաբեկը հեռանում է, բերդի գրավումը հանձնելով զորավարներից Ռոստոմ անունով մեկին: Ինքնավստահ ու գոռոզ այս զորավարը քամահրելով ամարասցիների զորական կարողությունները, գրոհում է բերդը և չարաչար պատժվում:

---

[18] *Կ ա ղ ա ն կ ա տ վ ա ց ի, էջ 326-327: Տե՛ս նաև Օ ր բ ե լ յ ա ն, էջ 159:*

[19] *«(Բաբեկը – Հ. Ս.) եկեալ ձեռնտութեամբ Աբլ Ասադայ Աղվանեցւոյ, կոտորեաց սաստիկ և անողորմ զգաւառն Բաղասականայ» (Օ ր բ ե լ յ ա ն, էջ 159):*

[20] *Կ ա ղ ա ն կ ա տ վ ա ց ի, էջ 327:*

[21] *Տե՛ս, օրինակ, Իբն ալ-Ասիր, թարգմ. բնագրից, առաջաբանը և ծանոթ. Ա. Ն. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1981, էջ 143:*

[22] *Կ ա ղ ա ն կ ա տ վ ա ց ի, էջ 326, 330:*

Բերդում պատսպարվածները դուրս են գալիս նրա դեմ, ջախջախում և հարկադրում գլխիկոր հեռանալ[23]:

Այդ ժամանակներում թե՛ Հայաստանը և թե՛ Արաբական խալիֆայությունը ի դեմս Բաբեկի ունեին մի ընդհանուր թշնամի, որն անասելի դժբախտություններ էր պատճառում հայերին և սպառնալից վիճակ ստեղծում խալիֆայության համար: Վերջինիս բոլոր փորձերը բռնել և ոչնչացնել նրան վերջանում էին անհաջողությամբ: 835 թ. նշանակվելով փոխարքա, Աֆշինը ևս, իր նախորդների նման, պատերազմական գործողություններ է սկսում Բաբեկի դեմ, որոնք փոփոխակի հաջողություններով ձգձգվում են մինչև 837 թ.: Վերջին վճռական ճակատամարտը նրանց միջև տեղի է ունենում նշված թվականի օգոստոս–սեպտեմբեր ամիսներին, որի ժամանակ Աֆշինը սոսկալի ջարդ է տալիս Բաբեկին և գրավում նրա քաղաք Բադդը[24]: Սակայն Բաբեկին հաջողվում է մի խումբ մարդկանցով փախչել և թաքնվել Հայաստանի լեռներում, մասնավորապես Սահլի տիրույթներում: «Անկաւ (Բաբեկը –Հ. Ս.) յերկիրն Հայկազնոյն Սահակայ»[25],– նշում է Միքայել Ասորին: Իբն ալ-Ասիր արաբ պատմիչն էլ է գրում, որ «Բաբեկը գնաց Հայաստանի լեռները թաքնվելու»[26]: Նա, որ այս իրադարձություններից մի քանի տարի առաջ էր եղել Հայաստանում, գրավել ու մոխրակույտերի էր վերածել Արցախի և Սյունիքի մի շարք գավառներ, լլկել ու անարգել շատ իշխանների (այդ թվում և Սահլ Սմբատյանի) կանանց, դուստրերին ու քույրերին[27], այժմ արաբներից հալածական, ապաստան էր փնտրում Հայաստանի լեռներում՝ իրական սպառնալիք դառնալով տեղի բնակչության համար: Իմանալով այդ մասին և իշխանության խորքերը նրա մուտքը կանխելու նպատակով, Առանշահիկ իշխանը սահմանի ողջ երկարությամբ պահակակետեր է դնում, դրանցում զինվորներ տեղադրում և աչալուրջ հսկողություն սահմանում: Նման նախազգուշական միջոցառումների շնորհիվ նա հայտնաբերում է Բաբեկի թաքստոցը, խորամանկորեն ձերբակալում և հանձնում Աֆշինին[28]՝ այդպիսով իր հայրենիքը ազատելով «մարդախողխող գազանից»: Շուտով հարավային Արցախի իշխան, Եսայի Աբու-Մուսեն ձերբակալում և Աֆշինին է հանձնում նաև նրա եղբորը՝ Աբդալլահին[29], որը Բաբեկի նման, նույնպես փորձում էր ապաստան գտնել Հայոց աշխարհի իրենց իսկ կողմից ասպատակված և դեռևս ծխացող բնակավայրերում: Բաբեկին ձերբակալելու և արաբական իշխանություններին հանձնելու համար, որպես հատուցում Սահլը Աֆշինից ստանում է պատրիկական թագ,

---

[23] *Կ ա ղ ա ն կ ա տ վ ա ց ի, էջ 327-328, Վ ա ր դ ա ն Ա ր և ե լ ց ի, էջ 79*

[24] *Գտնվում է Ատրպատականում, այժմյան Թալիշի Վիլաջ-չայ գետի վերին հոսանքում (տե՛ս Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, կազմեց Հ. Թ. Նալբանդյան, Երևան, 1965, էջ 145, ծանոթ. 93):*

[25] *Մ ի ք ա յ ե լ Ա ս ո ր ի, էջ 365:*

[26] *Իբն ալ-Ասիր, էջ 142:*

[27] *Նույն տեղում, էջ 143:*

[28] *Կ ա ղ ա ն կ ա տ վ ա ց ի, էջ 330: Իբն ալ-Ասիր, էջ 142-144, Տ ա բ ա ր ի.– Արաբացի մատենագրեր…, էջ 95, 119:*

[29] *Իբն ալ-Ասիր, էջ 144, Տ ա բ ա ր ի.– Արաբացի մատենագրեր…, էջ 95, 119:*

թանկարժեք նվերներ, մեծ գումար[30]: Երկիրն ազատվում է հարկերից[31], որոնց ծանրության պատճառով էր ապստամբել տեղի ժողովուրդը Սահլի առաջնորդությամբ: Ի լրումն այս ամենի, Աֆշինը Սահլին արտոնում է նաև «Իշխանութիւն ի վերայ Հայոց, Վրաց ու Աղուանից տիրել իշխանութեամբ ամենեցուն արքայաբար»[32]: Արաբ պատմիչների վկայությամբ՝ Սահլը Բաբեկին Աֆշինի մոտ էր ուղարկել իր Մուավիա որդու ուղեկցությամբ, որին փոխարքան նույնպես արժանացնում է դրամական պարգևի[33]:

Սահլ Սմբատյանի այս քայլը տարբեր մեկնաբանությունների տեղիք է տվել: Արաբ որոշ պատմագիրներ և նույնիսկ ուշ ժամանակների ուսումնասիրողներից ոմանք, դրա մեջ տեսնում են շահախնդրություն կամ փառասիրություն, ոմանք վրեժխնդրություն և քաղաքական շարժառիթներ[34]: Խնդրին ավելի սթափ է մոտեցել Հ. Քյուրտյանը, որը գրում է. «Սահլը դրամի համար չէր, որ Բաբակը արաբացվոց կը հանձներ: Սահլ իր հայրենիքը ավերողեն վրեժ կ'առներ»[35]: Եվ նա իրավացի է: Արաբ մատենագիրների ու հայ պատմիչների մոտ առատ տեղեկություններ կան Հայաստանում Բաբեկի վարած դաժան բռնությունների ու անսանձ կամայականությունների մասին, որոնք ցույց են տալիս, որ Բաբեկից ազատվելը Սահլի առաջնահերթ խնդիրներից էր: Դա բխում էր նախ և առաջ երկրի, Բաբեկի սանձարձակ գործողություններից դժգոհ հայ իշխանների և կոտորվող ազգաբնակչության շահերից: Նրա ձերբակալման գործում որոշակի դեր պիտի ունենար նաև Սահլի վիրավորված ինքնասիրությունը. Հ. Քյուրտյանը բերում է արաբ պատմիչ Մակդիսի վկայությունը, որի համաձայն «Սահլ կալանավորված էր Բաբակեն, և վերջինս պղծած էր իր մայրը, քույրը և կինը՝ Սահլի ներկայության»[36]: Ուստի, ձերբակալելով Բաբեկին ու Աֆշինին հանձնելով, Սահլը ազատում էր հայրենիքը ավազակաբարո նվաճողից, իսկ իրեն՝ անձնական թշնամուց:

Սահլ Սմբատյանին իշխանական թագ շնորհելով և մյուսներին իշխելու իրավունք արտոնելով, արաբները, փաստորեն, նրան ճանաչում են Արցախի գահերեց իշխան կամ իշխանաց իշխան: Այս ակտով, անշուշտ, էլ ավելի է բարձրանում Առանշահիկ տոհմի քաղաքական կշիռը երկրամասում, բայց ոչ ընդլայնում նրա ազդեցության ոլորտները: Առանշահիկների իշխանությունը շարունակում էր ամփոփված մնալ միջնարցախի շրջանակներում:

---

[30] *Իբն ալ-Ասիր, էջ 144, Տ ա բ ա ր ի.– Արաբացի մատենագրեր..., էջ 95, 119, նաև՝ Վ ա ր դ ա ն Ա ր և ե լ ց ի, էջ 109:*

[31] *Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, էջ 181, ծանոթ. 245, Հ. Ա. Ա դ ա մ յ ա ն. Յագուպի արաբ մատենագիրը և հայերը.– «Բազմավեպ», 1958, թիվ 3-5, էջ 100:*

[32] *Կ ա ղ ա ն կ ա տ վ ա ց ի, էջ 340:*

[33] *Իբն ալ-Ասիր, էջ 143:*

[34] *Տե՛ս, օրինակ, Տ ա բ ա ր ի.– Արաբացի մատենագրեր..., էջ 95, Յ ա ք ո ւ բ ի.– Արաբացի մատենագրեր..., էջ 119, Ս. Բ ա ր խ ո ւ դ ա ր յ ա ն. Արցախի, Շաքիի և Փառիսոսի իշխանություններ.– ՊԲՀ, 1971, № 1, էջ 62 և այլն:*

[35] *Հ. Ք յ ո ւ ր տ յ ա ն. նշվ. աշխ, էջ 22:*

[36] *Նույն տեղում, էջ 21: Վերհիշենք, որ արաբ պատմիչ Իբն ալ-Ասիրն էլ էր պատմում, որ Բաբեկը իր պիղծ էությամբ այդպես էր վարվում բոլոր իշխանների հետ, ով գեղեցիկ կին, քույր կամ մայր ուներ (տե՛ս Իբն ալ-Ասիր, էջ 143):*

Նկարագրվող դեպքերի ընթացքում Արցախի անդորրը խռովվում էր նաև այլ իրադարձություններով: IX դ. 30-ական թվականներին Արցախում հայտնվում են նոր թշնամիներ, որոնց Կաղանկատվացին անվանում է «բաղականեցիներ»[37]: Ուսումնասիրողների կարծիքով վերջիններս հարևան Սյունյաց նահանգ Բաղանիք կամ Բաղք գավառի բնակիչներն էին[38]: Ավելի քան հավանական է կարծել, որ իսկապես դա այդպես է, և եկել էին նրանք տեղական իշխան Աբլ Ասադ Ստեփանոսից ու Բաբեկից վրեժխնդիր լինելու՝ իրենց երկիրը ավերածությունների ենթարկելու ու մարդկանց կոտորելու համար: Նրանք սպանում են Աբլ Ասադին, որը Բաբեկի աջակիցն էր Բաղքի կոտորածում: Կաղանկատվացին գրում է. «Դաւաճանողքն ի սէր խաղաղութեան, որոց անուանք Դաւոն (Դավիթ – Հ. Ս.*) ու Շապուհ ճանաչիւր, սրով սպանին զՍտեփանոս՝ զկոչեցեալն Աբլ Ասադ, որ* էածն զԲաբան և եհար զԲաղականեցիսն»[39] *(ընդգծումը մերն է –* Հ. Ս.*): Կաղանկատվացու այս հաղորդման մեջ ուշադրություն է գրավում «դաւաճանողքն ի սէր խաղաղութեան» արտահայտությունը: Դրանից երևում է, որ մինչ այս իրադարձությունը, խաղաղություն է եղել բաղականեցիների և Բաբեկի ու Աբլ Ասադի միջև: Դրան նախորդած դեպքերը՝ դաշնակցությունը Սյունյաց տեր Վասակի հետ, Գեղարքունիքի կոտորածները, «անհրամանակատար» Բաղքի հնազանդեցումը իսկապես կարող էին որոշ ժամանակով խաղաղեցնել ըմբոստ սյունեցիներին, բայց չմարել վրեժի զգացումը: Մինչ նրանք ապրում էին «խաղաղությամբ», ծավալվում են նոր իրադարձություններ: Խալիֆայությունը Բաբեկի խռովությունը ճնշելու մի փորձ ևս անելով, մեկը մյուսի հետևից նրա դեմ է ուղարկում զորավարներ Հյումայիդ ալ-Տուսին (ըստ Կաղանկատվացու՝ Տավուսինին) և Աբրահամին՝ Ղեթա որդուն: Սակայն սրանք ևս իրենց նախորդների նման անհաջողության են մատնվում[40]: Բաղականեցիները, օգտվելով նրանց դեմ պատերազմով Բաբեկի զբաղվածությունից, Դավոյի (Դավիթի) և Շապուհի առաջնորդությամբ ապստամբում են ու, խախտելով Կաղանկատվացու ասած «խաղաղությունը», հարձակվում են նրանց վրա: Որպես իրենց հասած պատուհասների հիմնական մեղավորի, նրանք սպանում են Աբլ Ասադին, Բաբեկին իրենց վրա բերելու համար, գրավում են Բերդաձոր գավառն ու Ուռեաց գավառակի ավանները՝ Կառնակաշը, Հակարին ու Տափատը և «ի սուր նիզակաց կոտորեցին»[41] մարդկանց: Այնուհետև նրանք ամրանում են Գորոզու բերդում (Հաղրութի շրջանում՝ այժմյան Տումի գյուղի տեղում) և հարձակումներ գործելով շրջակա գավառների վրա, գրավում են նաև Վերին Վայկունիքը, Բերձորը, Սիսականը, Հաբանդը, Ամարասը, Պազկանքը և Մխանքը: Արցախի այս գավառներից զատ ապստամբները գրավում են Ուտիք նահանգի Տրի գավառը և տասներկու տա-*

---

[37] *Կ ա ղ ա ն կ ա տ վ ա ց ի, էջ 327:*

[38] *Ա լ ի շ ա ն. Արցախ, Երևան, 1993, էջ 173. Հ. Ք յ ո ւ ր տ յ ա ն. նշվ. աշխ., էջ 17, Ն. Ա դ ո ն ց. Քննություն Մովսես Կաղանկատվացու.– Երկեր, հ. Ա, Երևան, 2006, էջ 476: Ի տարբերություն նշվածների, Ֆ. Մամեդովան գտնում է, որ նրանք պավլիկյաններ էին (տե՛ս* Ф. М а м е д о в а. Кавказская Албания и албаны. Баку, 2005, с. 393*):*

[39] *Կ ա ղ ա ն կ ա տ վ ա ց ի, էջ 327:*

[40] *Նույն տեղում:*

[41] *Նույն տեղում:*

րի[42] իշխում այս տեղերում[43]: Չնայած Աբլ Ասադի ազգականները բռնում ու սպանում են Դավոյին և Շապուհին[44], բայց դրանով վերջ չի դրվում նրանց ասպատակություններին: IX դ. 40-ական թվականներին օտարամուտները նոր ավերածությունների են ենթարկում Սիսական, Ամարաս և Տրի գավառները[45]: Այլևս չհանդուրժելով նրանց գոյությունը, սպանված իշխանի քրոջ որդին՝ մեզ արդեն ծանոթ Եսայի Աբու Մուսեն, հարձակվում է ասպատակիչների վրա, խոշոր ջարդ տալիս և վերջնականապես դուրս քշում երկրից[46]: Ազատագրված գավառները նա միացնում է սեփական տիրույթներին և իշխում բոլորի վրա՝ Կաղանկատվացու բառերով, «իշխանացաւ ամենայնի»[47]:

Այնուամենայնիվ, բաղականեցիներից ազատվելը դեռ չէր ապահովում Արցախի խաղաղությունն ու հանգիստը: Շուտով նրանց գլխին մի նոր սպառնալիք է կախվում, քանզի արաբները շարունակում էին իրենց խստալուծ քաղաքականությունը: Դա էր պահանջում նաև խալիֆայությունում սկսված քայքայման ընթացքը կանխելու անհրաժեշտությունը: Մութավաքիլ խալիֆը (847–861 թթ.) դիմում էր ամեն մի միջոցի այն մասնատումից ու փլուզումից փրկելու համար: Նրա առանձնակի հոգածության հարցը իրենց տիրակալության ծայրագույն մարզերում և հատկապես Արմինիայում հանգիստն ապահովելն ու պահպանելն էր: Այստեղ իր ներքին ինքնուրույնությունն էր շարունակում պահպանել Հայաստանը: Հարկավոր էր վերջ տալ այդ ինքնավարությանը, թուլացնել երկիրը և ամբողջովին ենթարկել խալիֆայությանը, հարկերը հավաքել առավելագույն չափերով, էլ ավելի սահմանափակել քրիստոնյաների իրավունքը, մահմեդականներին տալ ամենալայն արտոնություններ: Այսպիսի հանձնարարականով որպես կառավարիչ Հայաստան է ուղարկվում Աբու Սայիդ Ապուսեթ անունով մի պալատական, որը, սակայն, գալով և տեղում տեսնելով հայ իշխանների միակամությունն ու դիմագրավելու պատրաստակամությունը, խալիֆի առաջադրանքը կատարելու համար մարդիկ թողնելով, հեռանում է երկրից[48]: Սակայն վերջիններիս գործողությունները բովանդակ Հայաստանում առաջ են բերում հակաարաբական մի շարժում, որ շուտով ծավալվելով վերածվում է զինված ապստամբության[49]: Ապստամբությունը ճնշելու համար Մութավաքիլ խալիֆը մեծաթիվ բանակով 852 թ. Հայաստան է ուղարկում Բուղա Շարաբի անու-

---

[42] *Հ. Քյուրտյանը բնագրի «զամս ԺԲ»-ն ուղղում է «ամիսս տասն և երկու» (տե՛ս Հ. Ք յ ո ւ ր տ - յ ա ն. նշվ. աշխ., էջ 18):*

[43] *Կ ա ղ ա ն կ ա տ վ ա ց ի, էջ 327:*

[44] *Նույն տեղում:*

[45] *Նույն տեղում, էջ 331:*

[46] *Նույն տեղում:*

[47] *Նույն տեղում, էջ 327: Թովմա Արծրունին էլ է գրում, որ Եսայի Աբու Մուսեն «տիրէր…մեծի կողմանն Աղուանից (իմա՛ Հայոց Արևելից կողմանց – Հ. Ս.)». տե՛ս Թ ո վ մ ա Ա ր ծ ր ո ւ ն ի ն Ա ն ա ն ո ւ ն. Պատմութիւն տանն Արծրունեաց (այսուհետև՝ Թ ո վ մ ա Ա ր ծ ր ո ւ ն ի), Երևան, 1985, էջ 276:*

[48] *Թ ո վ մ ա Ա ր ծ ր ո ւ ն ի, էջ 170-172, նաև՝* А. Т е р - Г е в о н д я н. *Նշվ. աշխ., էջ 138–139:*

[49] *Լ ե ո. Հայոց պատմություն.– Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1967, էջ 424 և հտգ., Հայ ժողովրդի պատմություն, հ. 2, Երևան, 1984, էջ 352-354:*

նով «թուրք ազգաւ»[50] մի զորավարի, որ էր «չարագոյնն քան զամենեսեանս»[51], միաժամանակ նրան նշանակելով Արմինիայի կառավարիչ (852–855 թթ.): Հայաստանում նա ամենուրեք հանդիպում է ուժեղ դիմադրության[52]: Սակայն Բուղային հաջողվում է կոտրել հայերի համառությունը, հնազանդեցնել նրանց և անցնել Վիրք, որտեղ ասպատակում է Տփղիսն ու նրա շրջակայքը, ապա Կովկասի գլխավոր լեռնանցքներին տիրելու նպատակով հարձակվում ծանարների երկրի վրա, որտեղ նրան սպասում էր դառն հիասթափությունը: Արքունի զորքը բոլոր ճակատամարտերում ջարդվում է և ստիպված վերադառնում «կորակնեալք ամօթալից խայտառակեալք»[53]:

Ծանարներից կրած դաժան պարտության վրեժը Բուղան որոշում է հանել հայերից և վերադառնալով Հայաստան 852 թ., շարժվում է նրա Արևելից կողմանց՝ Ուտիք-Արցախյան հայաշխարհի վրա: Հաստատվելով Պարտավում և ունենալով ուժերի գերակշռություն՝ Բուղան սկսում է հարձակումներ գործել մերձակա գավառների վրա: Տեղի բնակչությունը, իրենց իշխանների՝ Խաչենի իշխան Ատրներսեհի, Ուտիքի Տուս գավառի Սևորդյաց իշխան Ստեփանոս Կոնի, Գարդմանի Կտրիճ իշխանի առաջնորդությամբ ոտքի են ելնում պաշտպանելու իրենց երկիրը: Առավել ուժեղ էր վերջինիս գլխավորած դիմադրությունը: Ամրանալով Գարդման բերդում՝ նա երկար ժամանակ հերոսաբար պաշտպանվում է: Բայց ուժերն անհավասար էին: Բուղան պաշարում է բերդը, պատնեշներ կառուցում նրա շուրջը և գրոհով գրավում այն: Ձերբակալվում ու շղթայվում է Կտրիճ իշխանը[54]: Մեկը մյուսի ետևից հնազանդության են բերվում նաև մյուս ըմբոստները: Կտրիճ իշխանի ճակատագիրը կիսում են Ատրներսեհը «և զայլ ևս զհամազգիս նորա» ու Ստեփանոս Կոնը[55]: «Ոչ սակաւ ինչ արեան ճապաղիս հեղեալ ևս յայնմ աշխարհին»[56], Բուղան շարժվում է հարավային Արցախ: Այստեղ իշխան Եսայի Աբու Մուսեի կարգադրությամբ ժողովուրդը բռնում է տարածքի լեռնակողմերը, փակում լեռնանցքները, ամրացնում բերդերը և պատրաստվում կռվի: Եսայի Աբու Մուսեն իր մարդկանց կռվի է նախապատրաստում նաև հոգեպես: Դիմելով նրանց և օրինակ բերելով ծանարներին, նա ասում է. «ոչ …վատագոյն մեք քան զԾանարսն եղիցուք, զի և ամուրս հզօրագոյնս և բարձրագոյնս քան զնոսա ունիմք և դիւրափակս՝ առ ի յունել զմուտս կրճիցն. միայն միաբանութեամբ սրտիւ կացցուք ապաւինեալ յօգնականութիւնն Աստուծոյ. և թէ մեռանիլ ևս ումեք հասցէ՝ ի պարծանս անձին և ազգին իւրոյ համարեալ է, և պսակ

---

[50] *Կիրակոս Գանձակեցի. Պատմություն Հայոց (այսուհետև՝ Գանձակեցի), աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 78:*

[51] *Սամուէլի քահանայի Անեցւոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց (այսուհետև՝ Սամվել Անեցի), Վաղարշապատ, 1893, էջ 93:*

[52] *Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. 2, էջ 354-357:*

[53] *Թովմա Արծրունի, էջ 276:*

[54] *Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն Հայոց (այսուհետև՝ Դրասխանակերտցի), Երևան, 1996, էջ 130:*

[55] *Նույն տեղում: Նաև՝ Ստեփանոս Տարօնեցւոյ Ասողկան, Պատմութիւն տիեզերական (այսուհետև՝ Ասողիկ), Սանկտ Պետերբուրգ, 1885, էջ 107:*

[56] *Դրասխանակերտցի, էջ 130:*

մարտիրոսական ընկալցի ի Քրիստոսէ. զի ոչ եթէ ըստ հասարակաց սահմանաւոր մահու է, այլ ի վերայ սուրբ եկեղեցւոյ և ժողովրդեան Աստուծոյ»[57]: Բուղան Եսայի Աբու Մուսեին հնազանդության կոչ է անում: Սակայն հպարտ իշխանը, ամրանալով Մյուս Հաբանդ գավառի Քթիշ (Գտիչ) կոչվող ամրոցում (ներկայիս Լ.ՂՀ-ի Հադրութի շրջանի Տող գյուղի մոտ) և այնտեղ հավաքելով շրջակա գավառների բնակչությանը՝ կանանցով ու երեխաներով, մթերք պաշարելով, պատրաստվում է կռվի: Սկսվում են գրոհները, որոնք բոլորն էլ վերջանում են անհաջողությամբ: Տեսնելով դա՝ Բուղան նորից է դիմում Եսայի Աբու Մուսեին և «ողոքական բանիւք»[58] կրկնում հպատակության իր առաջարկը: Պատասխան խոսքում Եսայի Աբու Մուսեն Բուղային հայտնում է նրա դեմ մինչև վերջին շունչը կռվելու իր անբեկանելի որոշման մասին և խորհուրդ տալիս հեռանալ խաղաղությամբ, եթե իր համար թանկ է սեփական կյանքն ու զորքի ողջությունը: Նամակում նա նախ պարսավում է արաբ զորավարին, որ հակառակ աշխարհակալների մոտ ընդունված օրենքի, որը նրանց պարտավորեցնում է հոգ տանել հպատակների մասին, թեթևացնել նրանց տառապանքները, ինքը ավերածություններ ու կոտորածներ է սփռում, ապա շարունակում. «Եւ արդ յայտնի լիցի, զի որչափ բաւէ զօրութիւն իմ ու իցեմ կենդանի՝ կացից ընդդէմ զօրութեամբ և ուժով տեառն Աստուծոյ, և ոչ տեսից զքեզ սիրով խաղաղութեան. այլ տեսից զքեզ զինու և աղեղամբ և սրով, քաջ արամբք և ընտիր երիվարօք և քեզ եթե հաճոյ թուիցի ապրեցուցանել զքեզ և զզօրս քո՝ արի էլ աստի և գնա ի սահմանաց իմոց … ի քո ձեռս է խաղաղութիւն և խռովութիւն: Եթէ, որպէս ասացի, ի բաց գնաս յինէն՝ խաղաղութիւն է, և թէ ոչ՝ պատերազմ և կռիվ, և ճակատամարտ»[59]:

Եսայի Աբու Մուսեի պատասխանից շփոթահար, Բուղան նամակներ է հղում խալիֆին, պատմում իրադարձությունների ընթացքի ու քաջ իշխանի մասին և կարգադրությունների սպասում: Սպասման ընթացքում արաբ զորավարը շրջափակում է Քթիշ բերդը: Գրոհները բերդի վրա հաջորդում են մեկը մյուսին, սակայն հայերը մնում են անընկճելի: Բուղայի բոլոր փորձերը՝ կոտրել լեռնցիների դիմադրությունը, անցնում են ապարդյուն: Նրան չեն օգնում ոչ հավաքագրած ընտիր զորքը, ոչ ամրոցի շուրջը պատնեշների կառուցումը, ոչ կուտակած քարերն և ոչ էլ բերված քարանետ մեքենաները:

Հերթական պարտությունից հետո, ամոթահար Բուղան 10 օր շարունակ փակվում է վրանում և, մտատանջությունների մեջ ընկած, ստեղծված դրությունից դուրս գալու ելք է փնտրում: Այդ ժամանակ արքունիքից ստացվում է Բուղայի նամակի պատասխանը, որով պատերազմը մինչև հաղթական վախճան անվհատ շարունակելու կարգադրություն է արվում: Եվ Բուղան խնամքով նախապատրաստվում է կռվի. Քթիշ բերդը մի վերջին վճռական գրոհով վերցնելու

---

[57] *Թ ո վ մ ա Ա ր ծ ր ո ւ ն ի, էջ 276:*

[58] *Նույն տեղում, էջ 278:*

[59] *Նույն տեղում: Նամակը, որ համեմված է գեղեցիկ համեմատություններով ու պատկերավոր արտահայտություններով, գեղարվեստական խոսքի արժեք ունի: Ամբողջությամբ տե՛ս նույն տեղում, էջ 278-280:*

նպատակով, նա այնտեղ է հավաքում իր տրամադրության տակ գտնվող ամբողջ զորքը, թվով 200 հազար մարդ, հանդերձավորում և զինում զենքի բոլոր տեսակներով: Զորքին էլ ավելի ահեղ տեսք հաղորդելու համար, նա այն զարդարում է պես-պես և շողշողուն նշաններով: Վերջացնելով նախապատրաստությունը, արաբ զորավարը այդ ահագին բազմությունը, որը հենց միայն իր փայլատակող սպառազինությամբ, ծածանվող բազում դրոշներով, փողերի ու շեփորների որոտմունքներով ու զենքերի շաչյուններով արդեն իսկ երկյուղ էր ներշնչում, շարժում է բերդի պաշտպանների վրա: Այս անգամ նրան հաջողվում է նույնիսկ մոտենալ բերդին: Բուղային թվում է, թե մոտ է հաղթանակը, վերջապես կոտրված է բերդեցիների դիմադրությունը, և նրանք շուտով կհանձնվեն իր ողորմածությանը: Բայց աննկուն արցախցիները, կուռ շարքեր կազմելով, անցնում են հակահարձակման, հուժկու հարվածներով արաբներին ետ մղում լեռան վրայից և շարունակելով ջարդել փախչող հակառակորդին, հետապնդում են մինչև վերջիններիս ապաստանելը իրենց բանակատեղիում: Անսասան լեռնցիները ձեռք են բերում նաև մեծաքանակ ավար: Թովմա Արծրունին այսպես է նկարագրել հերոսական այս ճակատամարտը. «Եւ զօրքն Տաճկաց, պնդեցան և փակեցին շուրջանակի ի ներքս զգունդն Աղուանից և դիմեցին յանդուգն ի վերայ նոցա. և նոքա կային անշարժ, և ոչ ել այր քան զընկեր յառաջ. և մինչ նոքա կարծեցին թէ ի ձեռն նոցա մատնեցան՝ և նոքա կային յաղօթս և զԱստուած կարդային օգնել նոցա. և դիմեցին ի մէջ նոցա ի չորս առաջս ըստ նմանութեան տեառնանման խաչին, և բախեցին զճակատն և պատառեցին զռազմն դարձուցին ընդ զառ ի վայրն և իջուցին ի լեռնէ անտի, և հարին ի հարուածս մեծամեծս. որպէս յարդ ի հողմոյ վարեալ, կամ ծուխ վատնեալ ի մրրկէ՝ այնպէս կորեան գնացին յերեսաց զօրացն Աղուանից (Հայոց Արևելից կողմանց – Հ. Ս.): Եւ դարձան կուտեցին աւար, որոց ոչ գոյր թիւ»[60]:

Պատմիչի այս նկարագրության մեջ երևում է Եսայի Աբու Մուսեի ռազմավարական հմտությունը: Զորքը բաժանելով չորս մասի և դասավորելով Քրիստոսի խաչի նման, այսինքն՝ քառաթև, որով յուրաքանչյուր թևը ապահովված կլիներ թիկունքից, ու կարգադրելով մնալ անշարժ և առաջ չընկնել մեկը մյուսից, որից արաբները կխաբվեին՝ կարծելով, թե բերդում պատսպարվածները չեն դիմադրելու իրենց և ավելի կմոտենային բերդին, նա հարկավոր պահին միաժամանակ բոլոր կողմերից հարձակվում է հաղթանակի հույսով միամտված արաբների վրա և, ճիշտ օգտագործելով տեղանքի զառիվայր մակերևույթը՝ վերևից խփելով դեպի բերդ բարձրացող արաբներին, ջարդ է տալիս ու հեռացնում իրենից:

Այսպես մի ամբողջ տարի Բուղան հուսահատ փորձեր է անում գրավել Քթիշ ամրոցը: Այդ ընթացքում նա 28 անգամ գրոհ է կազմակերպում ամրոցի փոքրաթիվ բանակի վրա, սակայն ամեն անգամ դառը պարտություն կրելով, հարկադրված է լինում գլխիկոր հեռանալ[61]: Տեսնելով, որ զենքի ուժով չի կարողանում ծնկի բերել հզոր իշխանին, Բուղան դիմում է նենգության: Խալիֆի հետ պայմա-

---

[60] *Նույն տեղում, էջ 284-286:*

[61] *Մղված բոլոր ճակատամարտերի մանրամասն նկարագրությունները տե՛ս նույն տեղում, էջ 280-286:*

նավորվելով՝ թուրք զորավարն առաջարկում է, որ յուրաքանչյուրն առանձին նամակ հղի խալիֆին և բացատրություն տալ իրենց գործողությունների համար: Իր նամակում Եսայի Աբու Մուսեն հավատացնում է խալիֆ Մութավաքիլին, որ ինքն ապստամբ չէ և խալիֆայության դեմ չէ, որ կռվում է, այլ զենք է վերցրել հարկադրաբար՝ Բուղայի վայրագ գործողությունների հետևանքով: Նա միաժամանակ հայտնում է իր պատրաստակամությունը խաղաղություն կնքելու մասին: Մինչ նամակների պատասխանների գալը, հայտարարվում է զինադադար: Շուտով ստացվում են և դրանք: Եսայի Աբու Մուսեին ուղղված թղթում խալիֆը նրան անմեղ է ճանաչում և թողություն շնորհում նրա պատճառած վնասների, զորքի կոտորածի ու ավարների համար: Նա իշխանին նաև պատվական հանդերձներ է ուղարկում, նախշազարդ սաղավարտ ու սուր, կնիքով հավաստված երդմնագիր և առաջարկում իջնել Բուղայի մոտ, իսկ վերջինիս հանձնարարում է ընդունել նրան պատվով, անբարյացակամություն ցույց չտալ և զգուշությամբ ուղարկել իր մոտ[62]:

Միամիտ լեռնականը, որը որքան աննկուն էր ու քաջ բաց ճակատամարտում, նույնքան էլ անզոր պալատական դավերի ու խաբեության հանդեպ, հավատալով իրեն տրված խոստումներին, թողնում է անառիկ ամրոցը և գնում է Բուղայի մոտ: Սա ստացած հրամանի համաձայն նրան ընդունում է մեծ շուքով, զորահանդեսային ծեսերով և խաբկանքի երեքօրյա ճոխ հյուրասիրությունից հետո ձերբակալում է և շղթայակապ անում[63]:

Դիմադրությունն Արցախում ճնշված էր:

855 թ. Բուղան ետ է կանչվում: Նա իր հետ («առեալ ընդ իւր»[64]) «ի կալանս կապանաց» Սամարա՝ խալիֆայության այն ժամանակվա մայրաքաղաքն[65] է տանում ձերբակալված հայ իշխաններին՝ Գարդմանի Կտրիճ իշխանին, Տուս գավառի իշխան Ստեփանոս Կոնին, Խաչենի իշխան Ատրներսեհին ու նրա հորը՝ Սահլ Սմբատյանին, Եսայի Աբու Մուսեին և այլ իշխանների ու ազնվական մարդկանց[66]:

Սամարայում հայ իշխանները ենթարկվում են անլուր չարչարանքների: Մահվան սպառնալիքի տակ արաբները գերեվարվածներից պահանջում են ընդունել մահմեդականություն, որին ոմանք առերես համաձայնում են: Բայց մի խումբ իշխաններ էլ, նրանց թվում և Հայոց Արևելից կողմերից՝ Ստեփանոս Կոն իշխանը, հավատարիմ մնալով հայրերի դավանանքին, մերժում են արաբների առաջարկը և ընդունում մահը[67]:

---

[62] *Նույն տեղում, էջ 286-288:*

[63] *Նույն տեղում, էջ 288, Տ ա բ ա ր ի.– Արաբացի մատենագրեր…, էջ 100–101:*

[64] *Դ ր ա ս խ ա ն ա կ ե ր տ ց ի, էջ 130:*

[65] *Սամարան խալիֆայության մայրաքաղաքն էր 836-892 թթ.:*

[66] *Կ ա ղ ա ն կ ա տ վ ա ց ի, էջ 340, Թ ո վ մ ա Ա ր ծ ր ո ւ ն ի, էջ 296-298, Դ ր ա ս խ ա ն ա կ ե ր տ ց ի, էջ 130, Ա ս ո ղ ի կ, էջ 107, Վ ա ր դ ա ն Ա ր և ե լ ց ի, էջ 81, Տ ա բ ա ր ի.– Արաբացի մատենագրեր…, էջ 100–101:*

[67] *Դ ր ա ս խ ա ն ա կ ե ր տ ց ի, էջ 132, Ա ս ո ղ ի կ, էջ 107, 110, Գ ա ն ձ ա կ ե ց ի, էջ 79, Օ ր բ ե լ յ ա ն, էջ 173, Ս ա մ վ ե լ Ա ն ե ց ի, էջ 94:*

857–859 թթ. Սամարայում աքսորի մեջ գտնվող հայ իշխանները ազատություն են ստանում և մեկ-մեկ վերադառնում հայրենիք[68]: Այստեղ նրանք թողնում են առերես ընդունած մահմեդականությունը և վերստին անցնում քրիստոնեական հավատին:

Սահլ Սմբատյանը և Եսայի Աբու Մուսեն ո՛չ հանուն հավատի նահատակվածների մեջ են հիշատակվում և ո՛չ էլ գերությունից վերադարձածների: Հավանաբար, նրանք վախճանվել էին աքսորում կամ պահվել որպես գերի: Հ. Քյուրտյանը կարծում է, որ Եսայի Աբու Մուսեն 906 թ. դեռ ողջ էր[69]: Դրա համար նա վկայակոչում է Ստ. Օրբելյանին, որի հաղորդումներից մեկի համաձայն, նշված թվականին Տաթևի վանքի սահմանները հաստատող վավերագրի տակ իրենց ստորագրություններն են դրել նաև Եսայի, Գրիգոր և Ատրներսեհ Աղվանից (Հայոց Արևելից կողմանց) իշխանները[70]: Սակայն ժամանակի այն մեծ տարբերությունը, որ ընկած է Աբու Մուսեի գերի տարվելու՝ 855 և 906 թվականների միջև բացառում է նման հնարավորությունը: Այստեղ հիշատակված Եսային, Ս. Բարխուդարյանի իրավացի մեկնաբանությամբ, կարող էր լինել քաջազոր իշխանի նույնանուն թոռը[71], որը հայկական ընտանիքներում ընդունված ավանդույթի համաձայն կրում էր իր պապի անունը:

Բուղայի ետ կանչվելուց հետո՝ նույն 855 թ. հայոց կառավարիչ, ապա և 861 թ. իշխանաց իշխան է նշանակվում Աշոտ Բագրատունին: Արցախում, ինչպես և բովանդակ Հայաստանում բուռն իրադարձություններին հաջորդում է խաղաղության տևական մի շրջան, որն իր դրական անդրադարձն է ունենում երկրամասի սոցիալ-տնտեսական, քաղաքական ու մշակութային կյանքի վրա:

IX դարի դիմադրական կռիվներն արաբական լծի դեմ ապարդյուն չեն անցնում: Նրանց ճնշման ներքո 885 թ. ողջ Հայաստանի հետ մեկտեղ արաբական լծից ազատագրվում է Հայոց երկրի այս հատվածը ևս և Բագրատունիների գլխավորած ազատ ու անկախ Հայկական թագավորություն կազմի մեջ մտնող մյուս հայ ավատատիրական իշխանությունների շարքում շարունակում հյուսել իր հերոսական պատմությունը:

ОБСТАНОВКА В АРЦАХЕ В ПЕРВОЙ ПОЛОВИНЕ IX ВЕКА. ПРОТИВОСТОЯНИЕ АРМЯН

ГЕНРИК СВАЗЯН

Р е з ю м е

В середине VIII в. в Арабском халифате к власти пришла династия Аббасидов, что оказало свое отрицательное влияние в подвластных странах и, в частности, в Великой Армении и ее окраинных

---

[68] *Դ ր ա ս խ ա ն ա կ ե ր տ ց ի, էջ 134, Ա ս ո ղ ի կ, էջ 110:*

[69] *Հ. Ք յ ո ւ ր տ յ ա ն. նշվ. աշխ. էջ 139:*

[70] *Օ ր բ ե լ յ ա ն, էջ 234:*

[71] *Ս. Բ ա ր խ ո ւ դ ա ր յ ա ն. Արցախի, Շաքիի և Փառիսոսի իշխանությունները, էջ 57:*

областях – Утике и Арцахе. Утвердившись в Партаве, арабы чаще нападали на окружающие земли, грабя и убивая людей. Однако местные жители во главе со своими князьями каждый раз противостояли им, разбивали и изгоняли со своих земель. Иногда они восставали из-за тяжести налогов и произвольных действий налогосборщиков. Здесь нашли свой конец и другие захватчики, в том числе и Бабек, который, пытаясь скрыться от арабов в Армении, был схвачен князем Сахлем Смбатяном Араншаhиком и выдан наместнику Афшину. В 825 г. для подавления восстания на Армению двинулся арабский полководец Буха. В некоторых местах ему удалось покорить восставших и схватить их князей-вождей. Он направился в южный Арцах, где жители во главе с князем Есаи Абу Мусе, укрепившись в крепости Ктиш, оказали ему упорное сопротивление. Буха осадил крепость и совершив в течение года 28 штурмов, не смог ее захватить. Тогда Буха обманом заманил Есаи Абу Муса, заковал в цепи и вместе с другими армянскими князьями отправил к халифу. После подавления восстания Буха был вызван в халифат. Страной начал управлять князь Ашот Багратуни. Арцах, будучи одним из политических образований феодальной Армении, продолжал свою независимую от иноземных завоевателей жизнь.